# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

***Հաստատել նիստի հետևյալ օրակարգը***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 76-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի հուլիսի 09-ի թիվ 36-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի օգոստոսի 13-ի թիվ 50-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին:
6. Արթիկ համայնքի Շիրակացի փողոց 9/22, Շիրակացի փողոց 9/23 և Շիրակացի փողոց 9/24 հասցեներում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության (1,24365 հա ընդհանուր մակերեսով) հողամասերն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
7. «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ բանկային երաշխիքի պայմանագիր ստորագրելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 65-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 65-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 65-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 65-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

12. Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող 2,34283 հա ընդհանուր մակերեսով հողամասն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին:

13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից ուղղակի վաճառքով Ահարոն Ալբերտի Սահակյանին պատկանող մթերային խանութի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասն օտարելու և օտարման գին հաստատելու մասին;

14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում արտաբյուջետային հաշիվ բացելու մասին;

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24-Ն

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 76-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին,4-րդ և 6-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 76-Ն որոշման մեջ բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները

Եկամտային մասում

1) <<Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար>> տողում գրված <<10315000 տաս միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար>> թիվը և բառերը փոխարինել <<339600 երեք հարյուր երեսունինը հազար վեց հարյուր>> թվով և բառերով:
2) <<Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար>> տողում գրված <<3950000 երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար>> թիվը և բառերը փոխարինել <<269100 երկու հարյուր վաթսունինը հազար մեկ հարյուր>> թվով և բառերով:
3) <<Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ>> տողում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<29525800 քսանինը միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր>> թվով և բառերով:

Ծախսային մասում

1) Ճանապարհային տրանսպորտ բաժնի

ա/ <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> (4251) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառերը փոխարինել <<32375000 երեսուներկու միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար>> թվով և բառերով:

բ/ <<Մասնագիտական ծառայություններ>> (4241) հոդվածում գրված <<90000 իննսուն հազար>> թիվը և բառերը փոխարինել <<1343000 մեկ միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար>> թվով և բառերով:

գ/ <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<923000 ինը հարյուր քսաներեք հազար>> թվով և բառերով:

դ/ <<Հատուկ նպատակային այլ նյութեր>> (4269) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<157500 մեկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր>> թվով և բառերով:

2) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի

ա/ <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> (4251) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<170000 մեկ հարյուր յոթանասուն հազար>> թվով և բառերով:

բ/ <<Վարչական սարքավորումներ>> (5122) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<140000 մեկ հարյուր քառասուն հազար>> թվով և բառերով:

3) Արտադպրոցական դաստիարակություն բաժնի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> (45111) հոդվածում գրված <<148581000 մեկ հարյուր քառասունութ միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար>> թիվը և բառերը փոխարինել <<150091000 մեկ հարյուր հիսուն միլիոն իննսունմեկ հազար>> թվով և բառերով:/<<Արթիկի մարզահամալիր>> ՀՈԱԿ - 860000 դրամ, <<Արթիկի Գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ - 270000 դրամ, <<Արթիկի Գեղագիտական դաստիարակության կենտրոն ՀՈԱԿ>> - 380000 դրամ/:
4) Նախադպրոցական կրթություն բաժնի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> (4511) հոդվածում գրված <<141460000 մեկ հարյուր քառասունմեկ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար>> թիվը և բառերը փոխարինել <<142095000 մեկ հարյուր քառասուներկու միլիոն իննսունհինգ հազար>> թվով և բառերով:/<<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ/
5) Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ բաժնի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> (4511) հոդվածում գրված <<42695000 քառասուներկու միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար>> թիվը և բառերը փոխարինել <<43450000 քառասուներեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար>> թվով և բառերով:/<<Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ/
6) Աղբահանում բաժնի <<Կոմունալ ծառայություններ>> (4213) հոդվածում գրված <<30279000 երեսուն միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար>> թիվը և բառերը փոխարինել <<31579000 երեսունմեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունինը հազար>> թվով և բառերով:
7) Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<134644000 մեկ հարյուր երեսունչորս միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար>> թիվը և բառերը փոխարինել <<111295000 մեկ հարյուր տասնմեկ միլիոն երկու հարյուր իննսունհինգ հազար>> թվով և բառերով:
8) Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից <<140000 մեկ հարյուր քառասուն հազար>> դրամ հատկացնել համայնքի ֆոնդային բյուջե:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն /համաձայն հավելվածի/:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 09-Ի ԹԻՎ 36-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքին ղեկավար 2021թվականի ապրիլի 12-ի թիվ 86-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի հուլիսի 09-ի թիվ 36-Ա որոշումը:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2021թվականի ապրիլի 12-ի թիվ 86-Ա որոշումը, լուծարել «Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը:
3. Հանձնարարել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով ապահովել ընկերության լուծարման հետ կապված անհրաժեշտ գործողությունների կատարումը:
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

**Դեմ՝ 1**

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք, 15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Ուժը կորցրած ճանաչել Արթիկ համայնքի ավագանու՝ Արթիկ համայնքի Շիրակացի փողոց 9/22, Շիրակացի փողոց 9/23 և Շիրակացի փողոց 9/24 հասցեներում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող (1,24365 հա ընդհանուր մակերեսով) հողամասերն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին 2020թվականի օգոստոսի 13-ի թիվ 50-Ա որոշումը:

2.Լուծարել անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու պայմանագրերը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

**Դեմ՝ 1**

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

---

«ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 16-րդ և 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 12-ի «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ թիվ 87-Ա որոշումը:
2. Հաստատել «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմը և փոխանցման ակտը՝ համաձայն սույն որոշման 2-րդ հավելվածի:
4. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը, «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Գևորգ Փայլակի Փթուկյանին /անձնագիր՝ AM0466337, տրված՝ 12.10.2011թվականին, 028-ի կողմից/:
5. Հանձնարարել համայնքի ղեկավարին օրենքով նախատեսված ժամկետներում և կարգով կազմակերպել սույն որոշմամբ նախատեսված գործողությունների պետական գրանցման գործընթացը:
6. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

**Դեմ՝ 1**

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

---

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ 9/22, ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ 9/23 ԵՎ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ 9/24 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ,ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ (1,24365 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ) ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Արթիկ համայնքի ավագանուն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 0,14631 հա (վկայական N16072020-08-0046, կադաստրային ծածկագիր 08-002-0001-0057), 1,03799 հա (վկայական N 16072020-08-0038, կադաստրային ծածկագիր 08-002-0002-0002) և 0,05935 հա (վկայական N 10082020-08-0035 կադաստրային ծածկագիր 08-002-0514-0002) ընդհանուր 1,24365 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության հողամասերը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել <<ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության՝ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով հաշվի առնելով, որ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

**1.**Տալ համաձայնություն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 0,14631 հա (վկայական N16072020-08-0046, կադաստրային ծածկագիր 08-002-0001-0057), 1,03799 հա (վկայական N 16072020-08-0038, կադաստրային ծածկագիր 08-002-0002-0002) և 0,05935 հա (վկայական N 10082020-08-0035 կադաստրային ծածկագիր 08-002-0514-0002) ընդհանուր 1,24365 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության հողամասերը <<ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, արևային կայան ստեղծելու նպատակով, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**2.**<<ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման պայմանագիր:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

**Դեմ՝ 1**

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

«ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Տալ համաձայնություն «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության միջև ստորագրել բանկային երաշխիքի պայմանագիր 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Սույն պայմանագրի կնքման համար լիազորել «ԱՐԹԻԿ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Փթուկյանին:
3. Երաշխիքային գումարը ամրագրվելու է էներգախնայողության աջակցման հիմնադրամի կողմից իրականացվող «Եվրոպական Միությունը հանուն Հայաստանի կայուն էներգետիկայի» ծրագրի դրամական միջոցներով, որոնք կգրավադրվեն «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության համապատասխան բանկային հաշվին:
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

**Դեմ՝ 1**

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ընդունվել ցանկացող երեխաների դիմումների մեծ քանակը, հիմք ընդունելով «Արթիկի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արա Մերգելյանի զեկուցագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու թիվ 65-Ա որոշման հավելվածով հաստատված «Արթիկի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի 5-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «7»-ի փոխարեն գրել «7,36»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լյուդմիլա Վարդանյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 65-Ա որոշման հավելվածով հաստատված «Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում ավելացնել գործավարի հաստիք՝ 1 դրույք:
2. Գործավարի աշխատավարձը սահմանել 89103 /ութսունինը հազար հարյուր երեք/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Ղուլիջողյան Ռաֆիկ

Սահակյան Ահարոն

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

**Դեմ՝ 1**

Վարդանյան Ոսկան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արթիկի գեղագիտական դաստիարակության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայարփի Բիչախչյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 65-Ա որոշման հավելվածով հաստատված, «Արթիկի գեղագիտական դաստիարակության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում ավելացնել «պատանի քիմիկ» խմբակավարի հաստիք՝ 0,5 դրույք:
2. Աշխատավարձը սահմանել մեկ դրույքի համար 89103 /ութսունինը հազար հարյուր երեք/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Ղուլիջողլյան Ռաֆիկ

Սահակյան Ահարոն

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

**Դեմ՝ 1**

Վարդանյան Ոսկան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 65-Ա որոշման հավելվածով հաստատված, «Արթիկի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում ավելացնել ֆիզիրահանգիչի հաստիք 0,75 դրույք:
2. Աշխատավարձը սահմանել մեկ դրույքի համար 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2,34283 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ավագանուն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 2,34283 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր 08-002-0001-0057) անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել <<Արթիկի ֆուտբոլի մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության՝ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով հաշվի առնելով, որ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

**1.** Տալ համաձայնություն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 2,34283 հա մակերեսով հողամասը <<Արթիկի ֆուտբոլի մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, անհատույց (մշտական) օգտագործման, տրամադրելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 36-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՀԱՐՈՆ ԱԼԲԵՐՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԹԵՐԱՅԻՆ ԽԱՆՈՒԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթիկ համայնքի ղեկվարին է դիմել Ահարոն Սահակյանը, իրեն պատկանող մթերային խանութի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,01946 հա մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարելու նպատակով: Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ մթերային խանութի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,01946 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարել Ահարոն Սահակյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ ենթակետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 9-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության 27 հունիսի 1997 թվականի թիվ 4557 սեփականաշնորհման պայմանագիրը՝ Ահարոն Սահակյանի 2021թվականի ապրիլի 12-ի թիվ 771 դիմումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից Ահարոն Ալբերտի Սահակյանին պատկանող մթերային խանութի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,01946 հա մակերեսով հողամասն /կադաստրային ծածկագիր 08-002-0131-/ ուղղակի վաճառքով Ահարոն Սահակյանին օտարելու առաջարկությանը:

2.Հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 810 դրամ:

3.Պարտավորեցնել Ահարոն Սահակյանին համայնքապետարանի հետ կնքել հողի օտարման պայմանագիր, որի վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել Ահարոն Սահակյանի հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37-Ա

Արթիկ համայնք 15 ապրիլի 2021 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի-ի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում բացել արտաբյուջետային հաշիվ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից քաղաքացիների սպասարկման գրասենյակ հիմնելու ծրագրի շրջանակներում դրամաշնորհ տրամադրելու համար:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության պետական լիազորված մարմնին՝ համաձայնություն տալու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքին արտաբյուջետային հաշիվ բացելու համար:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝***

***Կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 9**

Վարդանյան Ոսկան

Սահակյան Ահարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

15 ապրիլի 2021թվական